

ՍՈՑԻԱԼԻՏԳՎԻՍՏԻԿԱՆ, ՆՐԱ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ. Լ. ԶԱՔԱՐՅԱՆ

Իր գոյություն հենց սկզբից լեզվաբանությանը հետաքրքրել են լեզվական փոփոխությունների հասարակական պատճառները, լեզվի և հասարակական երևույթների կապերն ու փոխազդեցությունները: Սակայն այդ հարցերի գիտական լուսաբանումը սկսվել է ուշ՝ կապված հասարակական բարբառների վերաբերյալ առաջին ուսումնասիրությունների հետ:

Եթե մինչև XX դ. լեզուն համարվում էր մերթ կենսաբանական, բնախոսական երևույթ, մերթ մարդկային հոգեբանության, մշակույթի արտահայտություն, ապա լեզվաբանության հասարակագիտական ուղղության երևան դալով լեզուն սկսում է դիտվել իբրև հասարակական երևույթ: Սակայն դարասկզբին լեզուն հասարակական երևույթ համարողները լեզվաբանությունը ևս համարում էին հասարակագիտության մի մասը (Մեյե և ուրիշներ): Հետագայում լեզվաբանությունը նպատակ ունենալով ճշտել իր առարկայի սահմանները և ուսումնասիրության շրջանակները, զարգացավ ամենից առաջ որպես կառուցվածքային ուղղություն: Ինքնահաստատման այդ շրջանում լեզվաբանության ուշադրության կենտրոնում լեզվի ներքին կառուցվածքի, բուն լեզվական համակարգի ուսումնասիրությունն էր: Արդյունքը եղավ միկրոլեզվաբանության ձևավորումը: Դրանից հետո, երբ արդեն լեզվաբանությունը հաստատվել էր որպես ինքնուրույն գիտություն, երբ սահմանազատվել էր այլ գիտություններից (հոգեբանություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, սոցիոլոգիա, նշանագիտություն և այլն) և իր որոշակի տեղը գտել գիտությունների շարքում, սկսում են գործել հակառակ միտումներ, լեզվաբանությանը տանելով դեպի իր սահմանների ընդլայնում, այլ գիտությունների հետ համագործակցում, նրանց մեթոդների, հայեցակետերի օգտագործում:

Առաջանում են սահմանային նոր գիտակարգեր (դիսցիպլիններ) լեզվաբանության և այլ գիտությունների միջև՝ հոգեբանական լեզվաբանությունը (պսիխոլինգվիստիկա), ազգագրական լեզվաբանությունը (էթնոլինգվիստիկա), հասարակագիտական լեզվաբանությունը (սոցիոլինգվիստիկա) և այլն:

«Ժամանակակից լեզվաբանությունը բաղկացած է մեծ թվով կենտրոնա-
կան և եզրային գիտակարգերից: Կենտրոնական գիտակարգերը ուսումնասի-
րում են լեզվի կառուցվածքը զարգացման ու հարաբերական հանգստի մեջ իբրև
մարդու մտքերը, կամքը, զգացմունքները արտահայտելու համար որոշակի
տարրերը որոշակի կանոններով ընդհանուր ու մասնավոր կաղապարների մեջ
համակցելու ընդհանուր կարողություն ու հնարավորություն, ինչպես նաև տվյալ

1 Այս մոտեցման առանձին օրինակներ կարելի է գտնել նաև ավելի վաղ շրջանի աշխատություններում, բայց որպես մամուլական մտակառույց (կոնցեպտիա) այն մշակվել և լեզվաբանական մտքի ոլորտում շրջանառության մեջ է դրվել հասարակագիտական ուղղության ներկայացուցիչների՝ Սոսյուրի և ուրիշների կողմից:

ժողովրդի՝ լեզվի կրողների կողմից այդ ընդհանուր կարողության ու հնարավորության իրականացումը: Եզրային գիտակարգերը ուսումնասիրում են լեզուն հասարակագիտական, հոգեբանական և այլ հայեցակետերից, տեսական ու գործնական մասնավոր խնդիրներ լուծելու համար՝ կիրառելով ինչպես լեզվաբանական, այնպես էլ ոչ լեզվաբանական մեթոդները²:

Լեզվաբանության եզրային գիտակարգերից է սոցիոլինգվիստիկան³, որը լեզուն բնում է հասարակագիտական տեսանկյունից:

Ժամանակակից սոցիոլինգվիստիկան իր հիմնական խնդիրներով ու սկզբբունքներով նորություն չէ: Այն նախորդ շրջանի հասարակագիտական լեզվաբանության շարունակությունն է, հարստացած նոր մեթոդներով և ժամանակակից կյանքի առաջադրած նոր գործնական խնդիրներով: Այստեղ գործունեն լեզվաբանության հասարակագիտական հարցերի ուսումնասիրության ինքնուրույնացման, առանձին միջգիտակարգի վերածվելու հետ: Նոր գիտակարգի ձևավորումը բերեց նաև նոր անվանում՝ «սոցիոլինգվիստիկա»: Այս տերմինն առաջին անգամ օգտագործել է ամերիկյան լեզվաբան Հ. Կարբին, 1952 թ.: Այսպիսով, սոցիոլինգվիստիկայի՝ որպես ինքնուրույն միջգիտակարգի ձևավորումը պայմանավորված էր նախ և առաջ լեզվաբանության զարգացման ներքին տրամաբանությամբ: Մյուս կողմից՝ դրան նպաստեցին հասարակական և գիտական կյանքի առաջադրած նոր գործնական, կիրառական պահանջները:

Ժամանակակից սոցիոլինգվիստիկայի հիմնական սկզբունքները, ելակետային մի շարք դրույթներ նույնն են, ինչ կառուցվածքային լեզվաբանությանը: Մասնավորապես, սոցիոլինգվիստիկայի համար նույնպես ելակետային է համակարգայնության և կառուցվածքայնության գաղափարը: Սակայն սոցիոլինգվիստիկան հակադրվում է կառուցվածքային լեզվաբանության (հատկապես սրա ձևական ուղղությունների) մի քանի դրույթներին, բնագիտում ու վերանայում է դրանք, լրացնում:

1. Սոցիոլինգվիստիկան հակադրվում է այն դրույթին, ըստ որի լեզուն միասնական, ամբողջական, կուռ համակարգ է, և այն, ինչ այդ համակարգով չի բացատրվում և խախտում է համակարգի ամբողջականությունն ու միասնականությունը կա՛մ անհատական խոսքի դրսևորում է, կա՛մ էլ ճազատ փոփոխակում: Սոցիոլինգվիստիկան ընդունելով համակարգայնության գաղափարը, գտնում է, սակայն, որ բառի բուն իմաստով ազատ փոփոխակումներ չեն լինում, քանի որ այն, ինչ շեղում է տվյալ համակարգի համար, անհրաժեշտ տարր է մեկ այլ համակարգի մեջ, այն, ինչ ազատ փոփոխակ է տվյալ պայմաններում, անփոփոխակ է այլ պայմանների դեպքում: Այսինքն, լեզվա-

2 Г. Б. Дж а у к я н, О некоторых теоретических вопросах языкознания («Известия АН СССР, Серия литературы и языка», 1974, № 2, стр. 120).

3 Այս տերմինը հարմար չէ թարգմանել ճառարկաբանական լեզվաբանություն. քանի որ լեզվաբանական գրականության մեջ երբեմն տարբերակում են «սոցիալական լեզվաբանություն» և «սոցիոլինգվիստիկա» հասկացությունները, առաջինը ըմբռնելով որպես լեզվաբանության այն բնագավառը, որ զբաղվում է ընդհանրապես լեզվի և հասարակության փոխհարաբերության հարցով, իսկ երկրորդը՝ որպես լեզվաբանության և սոցիոլոգիայի միջև ընկած մի առանձին միջգիտակարգ (ինտերդիսցիպլին) (И. Краус, К общим проблемам социолингвистики, «Вопросы языкознания», 1974, № 4, стр. 29).

կան ամեն մի միավոր բացատրվում է որևէ համակարգով: Ընդ որում, զուդահեռ գոյություն ունեն լեզվական մի շարք համակարգեր, որոնց հիմքում կարող է ընկած լինել ոչ միայն բուն լեզվի կառուցվածքը, այլև հանրության հասարակական կառուցվածքը (մշակութային, դասակարգային, ազգային, մասնագիտական, սեռային, տարիքային և այլն), մարդկային անհատականության հոգեբանական, մարդու պրակտիկ գործունեության ձևերի, մարդկային անհատական և հասարակական վարքագծի դրսևորման ձևերի կառուցվածքները և այլն:

2. Սոցիոլինգվիստիկական հետազոտությունների ժամանակ օգտագործվում, ուսումնասիրվում են մի շարք արտալեզվական տեղեկություններ, երևույթներ: Ինչպես, օրինակ, ուսումնասիրվում են լեզվի կրողների անհատական վերաբերմունքը, կարծիքներն ու գնահատականները լեզվական փաստերի ու երևույթների վերաբերյալ, լեզվական փոփոխությունների բացատրման ժամանակ հաշվի են առնվում մշակութային, հասարակական, ազգագրական, հոգեբանական, իրադրական և այլ գործոններ, առանձնակի ուշադրության են արժանանում լեզվական մի շարք անհատական, պատահական երևույթներ, որոնք, շնորհիվ իրենց հասարակական որոշակի նշույթավորման և հեղինակության, միտում ունեն վերածվելու օրինաչափության, լեզվական փաստերը գնահատվում են ոչ միայն իրենց բացարձակ արժեքներով ու նշանակություններով, այլև՝ խոսքային մասնավոր իրադրությունների մեջ:

3. Նլնելով կենդանի խոսքից, կառուցվածքային լեզվաբանությունը ձգտում է, սակայն, վերանայ կենդանի խոսքի այն բոլոր դրսևորումներից, որոնք չեն բացատրվում բուն լեզվական կառուցվածքով: Դրան հակառակ և ի լրումն դրան՝ սոցիոլինգվիստիկական պահանջում է ուսումնասիրությունների ժամանակ նախապատվություն տալ խոսքին (իրականությանը)՝ լեզվի (հնարավորության) նկատմամբ, կենդանի խոսքին՝ լեզվական համակարգի նկատմամբ, գործառությանը՝ կառուցվածքի նկատմամբ, համաշարադրանքին (կոնտեքստ)՝ հաղորդման միջոցների նկատմամբ: Այսինքն՝ սոցիոլինգվիստիկական նախապատվություն է տալիս այն ամենին, ինչը արտալեզվականի, լեզվական կառուցվածքի խախտումների անվան տակ լեզվաբանության ուսումնասիրության շրջանակներից դուրս էր թողնում կառուցվածքային լեզվաբանության ձևապատկան ուղղությունը: Զուտ լեզվական կառուցվածքով չբացատրվող փաստերից սոցիոլինգվիստիկական մասնավորապես ընտրում է հասարակական պայմանավորվածություն ունեցողները:

Այս բոլորից բացի, սոցիոլինգվիստիկական լեզվաբանության կենտրոնական գիտակարգերի համեմատությամբ աչքի է ընկնում ավելի մասնավոր՝ գործնական խնդիրներ լուծելու իր նպատակադրումով, կիրառականությամբ:

Բազմազան են այն հարցերը, որոնցով զբաղվել է սոցիոլինգվիստիկական առարկան: Առայժմ սոցիոլինգվիստիկայի պրոբլեմատիկայի հստակ սահմանափակում չկա և դժվար է կատարել, որովհետև սոցիոլինգվիստիկական դեռ նոր է ձևավորվում որպես ինքնուրույն գիտակարգ, և օր-օրի մեծանում է նրան հետաքրքրող հարցերի շրջանակը:

Ստորև համառոտ կներկայացվեն սոցիոլինգվիստիկայի մի քանի հիմնական խնդիրները, որոնք պատկերացում կտան սոցիոլինգվիստիկայի առարկայի և նրա նշանակության մասին:

«Հասարակական բարբառագիտության» հարցեր: Լեզվական համակարգը փոփոխվում, տարբերակվում է չորս չափումներով՝ երկարության, լայնության, խորության և ժամանակի մեջ: Ժամանակի մեջ կամ տարժամանակայա քննության բացահայտվում են լեզվի զարգացման, փոփոխման տարբեր փուլերը, աստիճանները կամ, այսպես փոխված՝ «պատմական տարբերակներ»: Երկարության քննելիս բացահայտվում են լեզվի տարածքային (տեղիորիալ) տարբերակները կամ բարբառները: Լայնության՝ հայտնաբերվում են լեզվի գործառական տարբերակները կամ ոճերը (խոսակցական, գեղարվեստական, հրապարակախոսական, գիտական, գործնական-գործարարական): Խորության քննությունը բացահայտում է լեզվի հասարակական տարբերակները (սոցիալական բարբառները): Դրանք «հասարակական տարբեր խավերի կամ խմբերի լեզվի մեջ առաջացող և որոշ չափով դրանց լեզուն ընդհանուր լեզվից տարբերող առանձնահատկություններն են»⁴: Հասարակական բարբառներ են ժարգոնները, ծածկալեզուները, պաշտամունքային և մասնագիտական լեզուները, սեռային և հասակային բաժանումների հետ կապված տարբերակումները, խոսողների կրթությունից, սոցիալ-տնտեսական վիճակից, հասարակական դիրքից, ազգային ծագումից և նման այլ գործոններից կախված տարբերակները:

Հասարակական բարբառների ուսումնասիրությունը սոցիոլինգվիստիկայի ամենահին պատմություն ունեցող խնդիրներից է: «Հասարակական բարբառագիտության վերաբերյալ հետազոտություններն էլ հենց հիմք դրեցին լեզվաբանության այն մասնաճյուղին, որը վերջին ժամանակներս ձևավորվում է իբրև ինքնուրույն գիտակարգ՝ հասարակական լեզվաբանություն»⁵:

Հասարակական բարբառագիտությունը ոչ միայն պարզապես նկարագրում է լեզվի՝ հասարակական շերտավորումով պայմանավորված տարբերակները, այլև բացահայտում է այն պատճառական կապերը, որոնք գոյություն ունեն լեզվական և հասարակական կառուցվածքների միջև: Ուսումնասիրության հատուկ մեթոդներով նախ հայտնաբերվում են լեզվական այն միավորները, որոնք ունեն հասարակական պատճառաբանվածություն, մյուս կողմից՝ հասարակական այն գործոնները, որոնք առաջ են բերում լեզվական երևույթների տարբերակումները⁶:

Լեզվի հասարակական փոփոխակումների հիմքում ընկած պայմանները կարելի է բաժանել երկու մեծ խմբի. ա) տվյալ լեզվով խոսող հանրության հասարակական կառուցվածքի. բ) այն հասարակական իրադրությունների, որոնցում տեղի է ունենում խոսքային գործոններությունը:

Հասարակական կառուցվածքը տվյալ հանրության բաժանումն է դասակարգերի, դասերի, շերտերի, տարիքային, սեռային, կրթական, մասնագիտական, աշխատանքային և այլ խմբերի: Այս կառուցվածքին համապատասխան

⁴ Է. Դ. Աղաջան, Լեզվի գոյության տարբերակային ձևերը («Բանբեր նրբանի համալսարանի», 1973, № 2, էջ 62):

⁵ «Русский язык по данным массового обследования», под ред. Л. П. Крыкина, М., 1974, стр. 6.

⁶ Առանձին լեզվական հանրությունների լեզվի հասարակական տարբերակվածության ուսումնասիրության օրինակներ են. W. Labov, The social stratification of English in New York citi. Washington, 1966; P. Trudgill, The social differentiation of English in Norwich, Cambridg, 1974:

նում է լեզվի հասարակական փոփոխականների որոշակի համակարգ, այսինքն՝ լեզվական համակարգի յուրաքանչյուր անփոփոխակ կարող է ունենալ իր փոփոխակը հանրության հասարակական կառուցվածքի յուրաքանչյուր աստիճանի համար: Ինչպես ցույց է տալիս հայերենի ձայնեղ և շնչեղ խուլ բաղաձայնների բաշխման ուսումնասիրությունը⁷, միևնույն բառերը տարբեր կերպ են արտասանվում տարիքային տարբեր խմբերի, սերունդների կողմից: Ծթե թագումի, կաբագ, նրբանց, ընդամենը, խաղախ և այլ բառերի դեպքում ավագ սերնդի մոտ գերիշխում է շնչեղ խուլ արտասանությունը, ապա կրտսեր սերնդի մոտ գերիշխում է ձայնեղ արտասանությունը: Հետևաբար, այստեղ գործ ունենք հասարակության տարիքային տարբերակվածությանը համապատասխան լեզվական միավորների փոփոխական, վերաբերվածորման և գրական նորմայի՝ որոշակի ուղղությամբ փոփոխվելու հետ: Սոցիոլինգվիստիկայի խնդիրն է պարզել այդ փոփոխական հասարակական-մշակութային պատճառները (իսկ այդպիսիք են տվյալ դեպքում՝ կրթական համակարգի զանգվածային բնույթը ստանալը, ինֆորմացիայի միջոցների՝ ռադիոյի, հեռուստատեսության, տպագիր արտադրանքի մատչելիության ու տարածման աճը, դպրոցական ուսուցման համակարգում ուղղախոսությանը հատկացվող տեղն ու նշանակությունը, հասարակության մեջ տարբեր սերունդների գրաված սոցիալական դիրքն ու հեղինակությունը և այլն):

Լեզվի տարբերակումներն արտահայտվում են ոչ միայն հասարակության կառուցվածքին համապատասխան, այլև կախված այն հասարակական իրադրություններից, որոնցում կարող է տեղի ունենալ խոսքային գործունեությունը: Ըստ հասարակական իրադրությունների կարելի է տարբերել անկաշկանդ և զուսպ, պաշտոնական և մտերմիկ, մասնագիտական և ընդհանուր գործածություն և այլ բնույթի խոսքեր: Իրադրությունից կախված՝ խոսքը կարող է լինել նաև կանոնավոր կամ անփույթ, կցկտուր կամ սահուն, արագ կամ դանդաղ, ձուլ կամ աղքատիկ, մաքուր կամ օտարաբանություններով լի և այլն: Սոցիոլինգվիստիկական պարզում է այն գործոնները, որոնք առաջ են բերում իրադրությանը համապատասխան լեզվի տարբերակումներ:

Լեզվական շփումների և շփվող լեզուների սոցիալական մասնագիտացման հարցեր: Լեզվական հանրությունները սովորաբար բնորոշվում են մեկից ավելի լեզուների տիրապետմամբ, այսինքն՝ երկլեզվակիր կամ բազմալեզվակիր լինելով: Այսպիսի լեզվական հանրությունների լեզվավիճակն էլ համապատասխանաբար կրնա լինել երկլեզվությամբ կամ բազմալեզվությամբ:

Երկլեզվության (բազմալեզվության) առկայության դեպքում տվյալ լեզվական հանրության կողմից գործածվող լեզուները գտնվում են ոչ միատեսակ պայմաններում, ամբողջ հանրության և հանրության տարբեր շրջանների կողմից արժանանում են ոչ միատեսակ վերաբերմունքի ու գնահատման: Լեզվի ամբողջ գործառական ոլորտը հասարակական գործոններով պայմանավորված որոշակի եղանակով բաշխվում է այդ լեզուների միջև: Լեզուներից յուրաքանչյուրը ձեռք է բերում գործառության իր ոլորտը, հասարակության մեջ տարածման իր սահմանները: Դա նշանակում է, որ այդ լեզուները տարբեր չափերով են գործածվում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում (ընտա-

7 է. դ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 24—28:

նիքում, առօրյա հաղորդակցման ժամանակ, գիտության, գեղարվեստական դրականության մեջ, պաշտոնական փաստաթղթերում, ինֆորմացիայի զանգվածային միջոցների համար և այլն), հասարակության տարբեր շերտեր ոչ միատեսակ չափով են տիրապետում և օգտագործում այդ լեզուները, հասարակական կյանքում դրանք կատարում են ոչ միատեսակ դեր (տեղական հաղորդակցման լեզու, միջպետական միջնորդ լեզու, ներպետական միջնորդ լեզու, կրթության լեզու և այլն)։ Մի խոսքով՝ լեզուները ստանում են հասարակական-գործառական մասնագիտացում։

Միևնույն լեզվական հանրության կողմից մեկից ավելի լեզուների գործածության երևույթն ընդունված է անվանել լեզուների շփում։

Երկու կամ ավելի լեզուների շփման դեպքում այդ լեզուների փոխհարաբերության ու գործածության հասարակական, իրադրական, թեմատիկ բաշխման հիմքում ընկած են ըստ էության նույն գործոններն, ինչ միևնույն լեզվի հասարակական տարբերակվածության դեպքում։ Այստեղ էլ լեզուների բաշխման հիմքում կարող են ընկած լինել հասարակության կառուցվածքն ու խոսքային իրադրությունը։ Լեզվական շփումների առումով սոցիոլինգվիստիկային հետաքրքրում է թե ի՞նչ ուղղությամբ է ընթանում լեզուների փոխազդեցությունը (փոխներթափանցում, միասնացում թե ինքնուրույնացում), որո՞նք են դրա պատճառները (ենթակա լեզվի սոցիալական հեղինակության բնույթը, պետական լեզու լինել կամ չլինելը, կրթության ոլորտում նրա գրաված տեղը, նրանով ստեղծվող դրական արտադրանքի, հեռուստատեսային և ռադիոհաղորդումների քանակը, ազգային ինքնագիտակցության մակարդակը և այլն)։ Ինչպիսի՞ն է լեզվավիճակը տվյալ հանրության սահմաններում (լեզուների մասնագիտացման բնույթը, տարածման սահմանները, նրանցով խոսողների քանակն ու հասարակական բնութագիրը, այդ լեզուներին տիրապետելու մակարդակը և այլն), որո՞նք են տվյալ լեզվավիճակի գոյության հասարակական-քաղաքական և մշակութային պայմանները (լեզուների նկատմամբ պետական հովանավորության գոյություն, կրթական համակարգում նրանց հատկացված տեղը, նրանցով ստեղծվող դիտական ու գեղարվեստական բնագիր գրականության ստեղծման քանակը, ինֆորմացիայի զանգվածային միջոցների համար նրանց օգտագործման աստիճանը, հասարակական տարբեր խավերի, դասերի, դասակարգերի մոտ այդ լեզուների հեղինակության բնույթը, տվյալ լեզվի և այլն կրող հանրության նկատմամբ արտաքին քաղաքական, տնտեսական, մշակութային ճնշման գոյություն և բազմաթիվ այլ հանգամանքներ ու գործոններ)։

Լեզուների շփման մասին գրականությունը սկսել է ծավալվել հատկապես վերջին քսանամյակում, Ու. Ուայնրայխի աշխատությունից հետո⁸։ Այդ ծավալմանը նպաստեց այն, որ վերջին տարիներս, կապված բազմաթիվ փոքր ժողովուրդների ազգային զարթոնքի ու իրենց ազգային արժեքների, հատկապես լեզվի նկատմամբ վերաբերմունքի փոփոխության հետ, լեզուների փոխհարաբերության, լեզվաքաղաքականության, լեզուների ձուլման, մահացման, պահպանման, վերակենդանացման, վերականգնման, մաքրման ու կանոնարկման խնդիրները սկսել են ավելի ու ավելի հետաքրքրել ոչ միայն լեզվաբաններին, այլև ամբողջ ազգերի ու պետությունների, դառնալով նրանց ազգային-

⁸ Uriel Weinreich, Languages in Contact, New York, 1953.

պետական քաղաքականության, դադարաբախտության արտահայտություններից մեկը:

Ինչ խոսք, մեզ մոտ, Հայաստանում նույնպես այսպիսի ուսումնասիրությունների անհրաժեշտություն կա, քանի որ մենք բոլորս երկլեզվության, երբեմն էլ՝ բազմալեզվության կրողներ ենք, իսկ հայերենի մաքրության, հարըստացման և զարգացման հեռանկարների հարցը ամենից ավելի հուզող խոնդիրներից է:

Լեզվաբանական գիտությունը, լեզվաշինության հարցեր (կիրառական սոցիոլինգվիստիկա): Լեզվավիճակը կախված է ոչ միայն հասարակական-անտեսական գործընթացներից, այլև լեզվաքաղաքականությունից, որը հասարակության կամ պետության կողմից իրականացվող և լեզվական տարբերային գործընթացի վրա ներգործելու նպատակով մշակված միջոցների ամբողջությունն է:

Լեզվաշինությունը լեզվի զարգացման ընթացքում լեզվական նոր միավորների ստեղծման, հնացածների վերանայման, թարմացման, հարստացման, մշակման ու նորմավորման պահանջների գիտակցված, գիտականորեն հիմնավորված և լեզվաքաղաքականության ուղղությունը համապատասխանեցված իրականացումն է: Լեզվաշինության հիմնական նպատակն է գրական նորմայի մշակումը և միատեսակ ու միանշանակ կիրառումը: Այս ուղղությամբ մեծածավալ աշխատանք է կատարվել և՛ հայերենի, և՛ աշխարհի շատ ու շատ լեզուների վերաբերյալ: Սակայն իրենց բնույթով սրանք անսպառ խնդիրներ են, քանի որ լեզուն անվերջ զարգանում է, փոփոխվում և լեզվաշինության, կանոնարկման նորանոր պահանջներ առաջադրում:

Լեզվաշինության, լեզվաքաղաքականության բնագավառում սոցիոլինգվիստիկայի խնդիրն է ուսումնասիրել հասարակական այն հանգամանքները, որոնց հիման վրա պետք է մշակել և իրականացնել լեզվաքաղաքականությունը, որոշել հասարակական-քաղաքական այն նախադրյալները, որոնք, հանդես գալով լեզվի զարգացման ընթացքում, պահանջում են լեզվաշինական այս կամ այն բնույթի աշխատանքներ, պարզել հասարակական հեղինակություն ստացած կամ ստացող լեզվական այն միավորները, որոնք կոչված են դառնալու կամ արդեն վերածվել են գրական նորմայի:

Կիրառական սոցիոլինգվիստիկան զբաղվում է նաև մի քանի այլ գործնական նշանակություն ունեցող խնդիրների լուծմամբ: Դրանցից են՝ սեփական գիր շունեցող ազգերի համար գրային համակարգերի ստեղծումն ու ժամանակակից պահանջներին համապատասխան գրական լեզվի մշակումը, ուղղագրական բարեփոխումների իրականացումը, տերմինաբանական գիտական համակարգերի ստեղծումը, լեզվի գրական նորմայի փոփոխությունների ուղղության որոշումն ու գիտական կանխատեսումը, համապատասխան կանոնարկված (նորմատիվ) քերականության մշակումը և այլն:

Լեզվական բնագիտության և խոսքային իրադրության փոխհարաբերության հարցեր: Քանի որ լեզվական հանրության տրամադրության տակ եղած հաղորդակցման միջոցները (լեզուները, նրանց գոյության տարբերակային ձևերը, լեզվական առանձին միավորները) ենթարկված են որոշակի հասարակական ու գործառական մասնագիտացման, հետևաբար հաղորդակցման մասնակից-

⁹ «Язык и общество», М., 1968, стр. 114.

ների համար անհրաժեշտություն է առաջանում կատարել հաղորդակցման միջոցների որոշակի ընտրություն, համաձայն՝ խոսքային այս կամ այն իրադրության:

Խոսքային իրադրությունը այն պայմանների ամբողջությունն է, որոնցում տեղի է ունենում հաղորդակցումը: Այդ պայմաններից են հաղորդակցվողների հասարակական վիճակն ու փոխհարաբերությունը, հաղորդակցման բնույթը (պաշտոնական, դործնական, մտերմիկ, ընկերական և այլն), թեման, լեզուն (մայրենի, օտար, միջնորդ և այլն), ֆիզիկական շրջապատը (հաղորդակցվողների քանակը, անձնավորությունը, սեռը, տարիքը, մասնագիտությունը, միջանց ծանոթ կամ անծանոթ լինելը և այլն), հաղորդակցվողների հոգեվիճակը, տրամադրությունը և այլն:

Լեզուները, լեզվի տարբերակային ձևերը, լեզվական առանձին միավորները ունենում են հասարակական-իրադրական որոշակի արժեքներ, այսինքն՝ միևնույն խոսքային իրադրության դեպքում լեզվական կառուցվածքի տեսակետից համարժեք միավորները, տարբերակները միմյանց փոխարինել չեն կարող: Այս երևույթին համապատասխան, լեզվական հանրության անդամների գիտակցության մեջ գոյություն ունեն հաղորդակցման միջոցների նպատակահարմար ընտրության բազմաթիվ կանոններ ու սկզբունքներ, որոնց պատվով է հետևել լեզվական հանրության յուրաքանչյուր անդամ մյուսների հետ կանոնավոր հաղորդակցում իրականացնելու համար: Միջոցների ընտրության այդ կանոններին հետևելը կոչվում է խոսքի վարք:

Այսպիսով, տվյալ խոսքի վարքագիծը կախված է խոսքային իրադրությունից և այդ իրադրության մեջ հաղորդակցման տվյալ մասնակցի ունեցած դիրքից: Սոցիոլինգվիստիկայի խնդիրն է ուսումնասիրել խոսքի վարքը հասարակական տեսանկյունից:

Լեզվի էկոլոգիայի հարցեր: «Լեզվի էկոլոգիան կարող է սահմանվել իբրև տվյալ լեզվի և նրա միջավայրի միջև փոխազդեցությունների ուսումնասիրություն»¹⁹: Տվյալ լեզվի միջավայր ասելով հասկացվում է այն հանրությունը, ուր նա գործառույթ է և այն լեզուների ամբողջությունը, որոնց հետ նա շփման մեջ է մտնում: Հետևաբար, լեզվի էկոլոգիան մասամբ հոգեբանական է (լեզվի փոխազդեցությունը այլ լեզուների հետ երկլեզվության և բազմալեզվության կրողների գիտակցության մեջ), մասամբ էլ՝ հասարակագիտական (լեզվի փոխազդեցությունը այն հասարակության հետ, որում նա գործառույթ է իբրև հաղորդակցման միջոց):

Էկոլոգիա տերմինը ծագել է իբրև անվանում կենսաբանության մի մյուղի, որն ուսումնասիրում է բույսերի ու կենդանիների և նրանց միջավայրի փոխազդեցությունները: Այն գործածվում է նաև հասարակագիտության մեջ, մարդկային հասարակության և նրա միջավայրի փոխազդեցության ուսումնասիրության բնադավառն անվանելու համար: Կենսաբանությունից ու հասարակագիտությունից էլ այդ տերմինը փոխանցվել է լեզվաբանությանը՝ միավորելու համար մի խումբ հարցեր, որոնցով զբաղվում են լեզվաբանության մի շարք մյուղեր:

Պատասխանելով այն հարցերին, թե ինչպիսի՞ն է տվյալ լեզվի տեղը լեզուների դասակարգման համակարգի մեջ, ի՞նչ ազդագրական ու ժողովրդա-

¹⁹ E. H a u g e n, The Ecology of Language, Stanford. California, 1972, էջ 325:

գրական (դեմոգրաֆիական) բնութագիր ունեն այդ լեզուն գործածողները, որոնք են այդ լեզվի գործածության ոլորտները, ինչ լեզուների հետ է այն շփման մեջ մտնում և մրցակցում, որոնք են նրա գոյության տարբերակային ձևերը, ինչ գրային ավանդույթներ ունի, ինչ աստիճանի է կանոնարկված ու միասնականացված, ինչպիսի՞ հենարան ունի պետության, կրթական համակարգի ու ժողովրդական զանգվածների կողմից, ինչ հեղինակություն է վայելում լեզվական հանրության շրջանում և նրանից. դուրս, լեզվի էկոլոգիական վերլուծությունը նպատակ ունի բացահայտելու այն շրջապատը, միջավայրը, իրադրությունը, որի մեջ հանդես է գալիս լեզուն, ինչպես նաև այդ միջավայրի, իրադրության ներգործությունը լեզվի վրա:

Սոցիոլինգվիստիկական տիպաբանության հարցեր: Սոցիոլինգվիստիկական տիպաբանությունը կառուցվածքայինի պես փորձում է լեզուները դասակարգել ըստ նրանց տիպերի, անկախ ծագումից: Ասկայն, ի տարբերություն կառուցվածքայինի, սոցիոլինգվիստիկական տիպաբանությունը դասակարգման համար որպես հիմք է ընդունում ոչ թե կառուցվածքային, այլ սոցիոլինգվիստիկական հատկանիշներ:

Կան դասակարգման տարբեր սխեմաներ՝ հիմնված տարբեր հատկանիշների վրա: Դրանցից առավել հետաքրքիր է Ջարլզ Ֆերգյուսոնի սխեման, որը նախատեսված է նկարագրելու ամենաբազմազան լեզվական իրադրություններ: Այն վարող է հստակ պատկերացում տալ սոցիոլինգվիստիկական տիպաբանական դասակարգման մասին¹¹: Այս դասակարգման մեջ լեզուները նախ բաժանվում են երեք մեծ խմբերի ըստ տվյալ լեզվական հանրության մեջ իրենց ունեցած հասարակական դերի ու կշռի. ա) «հիմնական լեզուներ» (հիմն. Լ.), բ) «երկրորդական լեզուներ» (երկր. Լ.), գ) հատուկ դիրք գրավող լեզուներ (հատուկ Լ.):

Հիմնական են այն լեզուները, որոնք մայրենի են տվյալ երկրի առնվազն 25%-ի համար կամ որոնցով խոսում է 1 միլիոնից ավելի մարդ, կամ որոնք պետական են և կամ էլ՝ որոնք այնքան տարածված են, որ նրանց տիրապետում է դպրոցի շրջանավարտների առնվազն 50%-ը:

Երկրորդական են այն լեզուները, որոնցով խոսում է տվյալ երկրի բնակչության 5—25%-ը կամ առնվազն հարյուր հազար մարդ:

Հատուկ դիրք գրավող են համարվում այն լեզուները, որոնք օգտագործվում են կրոնական ծեսերի ժամանակ, գեղարվեստական գրականության մեջ կամ ուսուցանվում են դպրոցում որպես հատուկ առարկա կամ էլ լայն տարածված են տարիքային որոշ խմբերի մեջ (ձապոններնը Տայվանում) կամ էլ միջնորդ լեզու են տվյալ երկրի ներսում:

Լեզվական իրադրությունը նկարագրելու համար օգտագործվում են պարզ բանաձևեր, ուր արտահայտվում է թե քանի լեզվի հետ գործ ունենք տվյալ իրադրության դեպքում և ո՞ր լեզուն այս երեք խմբերից որին է պատկանում:

Լեզուների մասին ավելի հանգամանալից տեղեկություններ տալու համար օգտագործվում են լրացուցիչ հատկանիշներ: Նախ, լեզուները ըստ իրենց մշակվածության ու մայրենիության բաժանվում են հինգ տիպերի. ա) տեղական լեզու (S)՝ ոչ գրական մայրենի լեզու տվյալ հանրության համար, բ) գրական

¹¹ Charles A. Ferguson. Language Structure and Language Use. Stanford California, 1971, էջ 157—169.

(ստանդարտ) լեզու (Գ)՝ գրական մշակման ենթարկված տեղական լեզու, գ) դասական լեզու (Դ)՝ ոչ մայրենի գրական լեզու, դ) խառնուրդ (պիշին) լեզու (Խ)՝ մի լեզվի կառուցվածքը մյուսի բառապաշարի հետ համատեղող լեզու, Լ) խառնածին (կրեոլյան) լեզու (Կ)՝ մայրենի դարձած խառնուրդ (պիշին) լեզու:

Այնուհետև լեզուները բաժանվում են յոթ խմբերի ըստ գործառական հատկանիշների. 1. տվյալ լեզվական հանրության համար հաղորդակցման հիմնական լեզու (Հ), 2. պաշտոնական գործնական հաղորդակցման լեզու (պ), 3. ներպետական միջնորդ լեզու (ն), 4. դպրոցական կրթության լեզու (դ), 5. կրոնական ծեսերի լեզու (կ), 6. երկրի սահմաններից դուրս միջնորդ լեզու (մ), 7. դպրոցում որպես առանձին առարկա ուսուցանվող լեզու (ու):

Հայկական ՄՍՀ-ում առկա է ինը լեզու՝ երկու հիմնական (հայերենը՝ պետական և մայրենի բնակչության մեծագույն մասի համար և ռուսերենը՝ պետական), չորս երկրորդական (ադրբեջաներենը՝ մայրենի լեզու բնակչության 6%-ի համար, քրդերենը՝ մայրենի լեզու 1,4%-ի համար, հունարենը՝ մայրենի լեզու 0,3%-ի համար, ասորերենը՝ մայրենի լեզու 0,2%-ի համար), երեք հատուկ դիրք գրավող (անգլերենը, ֆրանսերենը և գերմաներենը, որոնք դպրոցում ուսուցանվում են որպես հատուկ առարկա): Բանաձևը կլինի այսպիսին. $6 \text{ և } 2 \text{ հիմն. և } (Գպդկ : ՏՀ, Դպնդում) + 1 \text{ երկր. և } (ՏՀդկ) + 3 \text{ հատուկ և } (Դմու, Դու, Դու):$

Քրդերենը, հունարենը և ասորերենը բանաձևում չեն արտահայտված, քանի որ նրանցով խոսողները զգալի թիվ չեն կազմում:

Զնայած որոշ թերություններին, այս սխեման հիմնավորված է սոցիոլինգվիստական մեծածավալ հետազոտություններով և հակիրճ բանաձևերով ի վիճակի է նկարագրել բազմատեսակ լեզվական իրադրություններ:

Ահա սրանք են այն հիմնական խնդիրները, որոնցով զբաղվում է սոցիոլինգվիստիկան: Պրոբլեմատիկայի այս հակիրճ նկարագրությունը մոտավոր պատկերացում է տալիս այն նվաճումների մասին, որոնց հասել է սոցիոլինգվիստիկան մինչև վերջին ժամանակներս:

СОЦИОЛИНГВИСТИКА, ЕЕ СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ И ЗАДАЧИ

О. Л. ЗАКАРЯН

Р е з ю м е

Социальная природа языка издавна интересует лингвистов. С самого начала своего существования как науки языкознание изучало социальные причины языковых изменений, дифференциации языка и связи с другими общественными явлениями. Зародившись в рамках традиционного языкознания, социальная лингвистика в наши дни постепенно формируется как отдельная дисциплина под названием «социолингвистика». Однако поскольку социолингвистика как одна из периферийных дисциплин современного языкознания находится в стадии становления,

многие ее исходные положения недостаточно четко определены, что касается прежде всего предмета социолингвистики.

Предметом изучения социолингвистики являются: 1) социальная диалектология, 2) социолингвистические аспекты теории лингвистической относительности, 3) проблема социально-функциональной специализации разных языков в условиях двуязычия или многоязычия, 4) вопросы языковой политики (прикладная социолингвистика), 5) социолингвистические аспекты проблемы речевого поведения, 6) экологии языка, 7) проблемы социолингвистической типологии.